

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱԶԻՐԷ — Ապրիլի փոփոխություններ

ՄՈՒԳԱԹՅԱՄԻՆ ԳԻՐԻՆ ԳԻՐԻՆ

Pour les annonces s'adresser

à la Rédaction du Journal PHAROS

LE CAIRE — RUE ABDIN

vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆԻՆ

Մէկ անգամի համար տողը 3 ՂՂ. ողջ

Մէկ անգամի աւելի ծանուցումներու հա-

մար մասնաւոր պայմաններ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՇԱՐԱԹ

Տարեկան 100

Վեցամսեայ 55

Տարեկան 30

ՇԱՐԱԹ ԵՐԵՎԱՆԻ ՇԱՐԱԹ

Տարեկան 26

Վեցամսեայ 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՂԱՄԻՆ

ՈՒՂՂ ԵՒ ԳՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

ԼԵՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր — Յ. ԱԼԻՍԻՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ինչպէս մեր առաջին թուով ծա- նուցած ենք, «Փարոս»-ի տնօրէնու- թիւնը իր բոլոր ուղարկութիւնը և ժամանակը թերթին խմբագրութեան և անոր զարգացման նուիրել կարե- նալու համար, այս անգամ մատա- կարարութեան ճիւղը բոլորովին զատած է խմբագրութենէն և Գա- ղաքիս պատուաւոր սեղանաւորներէն ՄԵԾ. ՍԱՐԳԻՍ ԷՖ. ՄԻՐԱՆԻԱՆ Բա- րեհաճած է ստանձնել այդ ճիւղը: Հետեւեալ աշտարակներէ սկսեալ «Փա- րոս»-ի հին և նոր բաժնեգրներու և վճարեալ հրատարակութեանց այն ստացականները միայն վաւերական են որոնք տնօրէնութեան և կնիքը և միւսնոյն ատեն Միւրանեան էֆէնտիի ստորագրութիւնը կը կրեն:

Միւրանեան էֆէնտիի գործառն- ղին է ի Պապ-է-Լալա, Կառավար- չական Պալատան գիմաց:

AVIS IMPORTANT

La direction du «Pharos» a l'hon- neur de porter à la connaissance de ses abonnés et du public en général, qu'ayant confié l'administration du journal à M. SARKIS MIRANIAN, à Bab- el-Khalk, en face du Gouvernorat, tous les reçus tant pour les abonne- ments que pour les annonces doivent porter la signature de l'Administra- teur conjointement avec le cachet de la Direction.

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ

Վ. Մ. ԱԼԻՍԻՆ

«Պալատին Աւարայրի» ծերունի բանաստեղծը իր Լրեք քարտի գա- րը լրացնելէ յետոյ կը մեղնի իր սպիտակ սենեակին մէջ պլպլուկ մը նման: Հ. ՂԱՆՈՂ Վ. Մ. Ալիշան ոչ միայն Միւրանեաններու ալ և ամ- բողջ հայութեան պարծանքը իր մա- հով մեծ բաց մը կը ձգէ գիտնա- կաններու և մանաւանդ ճշմարիտ Հայ-Հայրենասէրներու շարքին մէջ: Մեր նպատակը հոս կ'ենտադրուի մ'ընել չէ, քանի որ հատորներու

մէջ միայն կարելի է նկարագրել Ալիշանը՝ իր վանական կեանքին ա- ռաջին վայրկեանէն մինչև մահի վեր- ջին վայրկեանը, հապա յարգական վերջին ողջոյն մը տալ անոր դադա- ղին որ, աւա՜ղ, շատոնց արգէն մը- տաւ հողին ներքեւ որ սակայն չկը- նար ծածկել անոր համբաւը: Հ. ՂԱՆՈՂ Վ. Մ. Ալիշան ճշմարիտ Հայ ազգասէրն էր ինքզինքը ամբողջովին գրականութեան տուած: Այլապէս, Միւրանեան Լ.Ն., ահա՜ իրեն կենդանի վկայները. անկեղծ սրտի և առողջ մտքի տէր վարդապետն էր. իր ի- մաստասիրական հեղինակութիւնն- րը յայտնի ցոյց կուտան անոր վե- հովութիւնը կրօնքի և բարոյականի մասին: Հոն՝ արեւմտեան Վենետիկի եզերքներէն գրեթէ երկու ժամ հեռու, Ս. Ղազարի առանձնացեալ կղզիին մէջ բարձր եղևնի մը ներ- քեւ՝ ցերեկի ճաշէն յետոյ, Հ. ՂԱՆՈՂ Ալիշան՝ ձեռքը գիրք մը, և սովորաբար Հոմերոսն էր այն, կ'երթար հանգչելու և խորասուզուելու իր մը- տածականին մէջ: Վենետիկի վար- դապետները մտածականի յատ- կացուած ժամեր ունին. Ալիշան ա- նոնց արիւնքն էր: 1890-93 ին էր որ ճանցայ սպիտակամորուս նիւար ծերունին որին գէմքին վրայ կարե- յի էր կարգաւ Ալիշան անունը. իր սե հագուստին մէջ բաթմաթում, ձեռքերը կուրծքին վրայ խաչաձև, աչքերը հանդարտ, նա մունջ քայ- լըրով կ'երթար միայն իր սենեակէն եկեղեցի և եկեղեցիէն իրեն իրա- կան եղևնիի ծառին ներքեւ: Վան- քին ներքին գործերը չէին հետա- քրքրէր զնա քանի որ նախ վստահ էր թէ լաւագոյն արգէն կը կառա- վարուէին և յետոյ ժամանակին շա- տէն շատ իսկ աշխատած էր: Իր ե- րիտասարդ տարիքին մէջ Բաքիդի Մուրատեան ազգային վարժարանին տնօրէն՝ ունեցած է աշակերտներ ո- րոնք հայութեան մէկ մէկ պար- ծանքներ են. վարած է Վենետիկի վարժարանին մէջ նոյն պաշտօնը նոյնքան արդիւնաւորութեամբ. անոր վերին հսկողութեան ներքեւ ուսած աշակերտներէն միայն գովեստ և ե- րախտագիտական արտայայտութիւն կարելի է լսել: Իր ամեն յատկու-

թիւններուն հետ ունէր նաեւ լաւ լեզուագէտի համբաւը. բայց ամէն բանէ վեր Աւարայրի բանաստեղծը ամենագեղեցիկ Հայ-հայրենասէր և բանասէրը եղած է որի մասին շատեր և շատեր կը վարանին և պիտի վարանին քննա- դատական մ'ընելու: Բերանէ բե- րան լուած համբաւ մը չէ սա. իր գիրքերը այնքան մեծահատոր՝ իւ- րաքանչիւր տողի մէջ շահեկան պա- րունակութիւն մ'ունին. միայն Հայ ազգը չէ որ կ'ընդունի զայս, միայն հայութիւնը չէ որ կը հպարտանայ Ալիշանով, հապա անգլի, լոյսի կեդ- րոններու, Ֆրանսայի, Իտալիոյ, Ռու- սիոյ գիտական ակադեմիայները ի- րենց պատուակալ անդամ՝ անուա- նած են այն Հայը, Հ. Ալիշանը, որ Ս. Ղազարի վանքէն Հայաստան շան- ցած գիտէր թէ ո՛ր գիրքին ո՛ր ան- կիւնը կը գտնուի այս ինչ աղբւրը և կամ թէ որ եկեղեցիին ո՛ր պա- տին վրայ էր այն ինչ արձանագ- րութիւնը. Հայաստանի հիւնքիւն- ները անոր համար ունէ գաղտնիք չունէին: Հ. Ղ. Ալիշանի դառն կո- րուստով չկորսուի անոր ազգագու- ցական լիարժեք արձանագրութիւնը: Մնաստուկն էր անոր անտիպ գոր- ծերը որ անտարակոյս ի լոյս պիտի ընծայէ Միւրանեան միաբանութիւն- նը ի յիշատակ անմահ Ալիշանի որ իր հեղահամբոյր բնաւորութեամբ համարձակութիւն կուտար ամենուն իրեն մտնեալու և օր մը մինչ իրեն հարցուցինք թէ ե՛րբ ուրիշ հրա- տարակութիւն մ'ալ պիտի նուիրէր ազգին, պատասխանեց. «Տղա՛քս, այսպիսի կը բաւէ, մնացած ձեռա- գիրներս թող հրատարակեն իմ մա- հէս յետոյ որ շատ հեռու չէ»:

Աստուածածնի տունին, հին սովորութեան մը համեմատ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանի ուսանողները Ս. Ղազարի վանքը կ'երթային հանդիսաւոր պատարա- գի ներկայ ըլլալու որմէ յետոյ տե- ղի կ'ունենար աշահամբոյրի սովորութեան գործադրութիւնը: Պարզ սենեակի մը մէջ ուր միայն վանա- կան անշուք մահճակալ մը և երկու աթոռ կը գտնուէին, իսկ պատու- հանի առջև հացի կտորուանքներու պնակ մը թռչուններուն համար, Հ.

ՂԱՆՈՂ Վ. Մ. Ալիշան, նստած՝ իր պարզուկ գրասեղանին առջև, թուղ- թի պլպլուկ կտորներու վրայ արձանա- գրութիւններ կ'ընէր երբ ներս մը- տանք աշահամբոյրի: Իր պարզու- թեանը մէջ այդ պատկանելի ծե- րունին ոտքի վրայ կայնած հայրա- կան քաղցր յորդորներէ յետոյ մեզ կը ցուցնէ կեանքի ճամբան, որով- հետեւ այն տարին շրջանաւարտ էինք. «Տղա՛քս, ըսաւ, դպրոցին մէջ սոր- վածներէդ բոլորովին տարբեր բա- ներ սորվելու պիտի երթաք. հոս իբրեւ Հայ ապրեցաք, աշխարհի մէջալ Հայ և իբր ճշմարիտ Հայ ապրեցէք»:

Այս մը լսելէ յետոյ. «Երբ ընթեր- ցասրահն էինք, շարունակեց, նշմա- րեցի որ գրեթէ ամենք ալ «Հնչակ» «Դրօշակ» և յեղափոխական թեր- թերը լսեցէք կը կարգայիք. հըրճ- ուեցայ, այո՛, տեսայ ձեր հայրենա- սիրական եռանդը, սակայն կը վախ- նամ. իմ խորհուրդս ըլլայ, սիրեցէք հայրենիքիդ առանց ձեռքէ ձգե- լու, ողջ մտութիւնը և խոհմտութիւնը»:

Հիմա կը մտածեմ թէ ի՞նչ ըսել կ'ու- ղէր Հ. ՂԱՆՈՂ իր տակաջնի վրայ ինչ- նալ ուլ. ազգասէր մ'էր նա և ճշ- մարիտներէն ճշմարիտ որ մեզ կը քարոզէր ազգասիրութիւն ուրեմն նաեւ յեղափոխութիւն բայց ողջմը- տութեամբ և խոհմտութեամբ: «Պըլ- պուլն Աւարայրի» առաջին տողերը՝ Ո՛նց գաս իմ լուսնակ հեղեկ ու հանդարտ, Համապիւր լուսնովդ ի լեռ ձոր եւ արտ, եւ ի նահապետս որ մտք մուար Գիշերածամիկ ժուռ գամ յԱւարայր:

—գրող նահապետը յիշաւի զգացեր էր թէ իր նահապետական տարիքին մէջ մուար մտք պիտի թափառէր նոր Աւարայրի մը դաշտին մէջ ուր պիտի կրկնուէր նոր Վարդանանց մը նորանոր նահապետութիւններով: Նա՛ այդ մեծ հիմնաստ, այդ գե- րազանցապէս համբաւոր Հայ-աշխար- հագէտը Ալիշան՝ ճշմարիտ Հայ մ'էր և աւելին ազգասէր յեղափոխական մը որին գաղաղին առջև ամբողջ հայութիւնը յարգանքով կը խոնար- հի. կը գոցուի գերեզմանը, նախնա- կան հողը կրկին հող կը դառնայ, սակայն նահապետին անմահ յի- շատակը և համբաւը դարձու շրջ- ջաններէն իսկ անգլի կը մնայ ան- չէջ. միշտ կ'ապրի և յիշատակ պիտի ապրի Հայ ազգին փառքը Հ. ՂԱՆՈՂ Վ. Մ. Ալիշան:

Հ. ԱԼԻՍԻՆ

Նախկին աշակերտ Մուրատ Ռափայէլեան վարժարանի

Ի. Տ Ե Մ Ի Ր Զ Ե Ա Ն

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

ԳԵԱՄԷԼ ՓՈՂՈՑ ԹԻՒ 3, ՕԹԷԼ ՇԵՓԸՐՏՍԻ ԴԻՄԱՑ

Երեքտարական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ ակուայի հիւանդութեանց բուժում: Պատրաստութիւն բնականին յար և նման կեղծ ակուաներու, քանքիներու ոսկիէ, ալյուրիներէ, քանքիէ և Ապահով և տոկուն քոյունքաժ, ոսկի, բլաթին, կայն, կայն: Լինտերու հիւանդութեանց գարմանում երեքտարական և ուրիշ միջոցներով:

ԿՆՈՋ ՄՈՐԹԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Որչափ որ ալ կնոջ բարոյական եւ հոգեկան ձեւերը կը բարձրացնեն զայն ընկերական կեանքին մէջ, անոր կարեւոր դերը մը կուտան, նորէն տարակոյս չի կայ որ կին մը իր արտաքինով ուրիշներու վրայ մեծ ազդեցութիւն կրնայ ունենալ, քանի որ մարդուն մէջ ԿԵՆՏԱՆԻՆ զօրաւոր է միշտ ու պիտի մնայ այնպէս:

Գարեբու անսկիզբ շարունակութեանը մէջէն, մարդը իր ծագումէն ի վեր՝ կեանքի բերաւոր ու շատ անգամ հակոտնեայ փոփոխութիւններուն յարմարելով հանդերձ, պահած ու զարգացուցած է իր մէջը կենդանի բնազդը ու ձգտումները եւ որուն շնորհիւ միայն կարելի եղած է յաւերժացնել մարդկային ցեղը. ու մարդկային այս յաւերժական բնազդներուն եւ ձգտումներուն մէջ կնոջ գեղեցկութիւնը աւելորդ զարդ (luxu) մը չէ նկատուած երբէք, այլ անհրաժեշտ պայման մը կեանքի յեղաշրջական յառաջդիմութիւններուն մէջ:

Բնութիւնը սակայն անիրաւ ու ժլատ է, ու շատ հեղինակաւորութիւնը յարգող մը ըլլալէ, մէկու մը ստատորէն իր շնորհները չտալած ատեն, ուրիշի մը հանդէպ ծայրայեղօրէն կծծի գոնուած է, բայց այս անհասարակութիւնէն իսկ ծագած է կանացի գեղեցկութեան այն ալիքան պէսպիսութիւնը որ աշխարհը վերածած է հմայիչ ծաղկանոցի մը. անոր մէջ ընտանի ու քնքուշ ծաղիկներու մօտիկը, վայրի ու փոշոտ խոտերն ալ իրենց յատուկ սիրունութիւնն ունին:

Ամէն կին, բաւական է որ հաշմանդամ ու վատառող չըլլայ, իրեն յատուկ գեղեցկութիւնը ունի, ոսկի գանգոլներով շրջապատուած անգլուհի մը կաթնաթոյր զէմբէն նուազ հրապուրիչ չէ արեւէն այրած գնչու կնկան մը սեւ աչքերուն կրակոտ նայուածքը, երկուքն ալ տարբեր վիճակայրերու մէջ ծնած. իրենց յատուկ էջի դերն ու հմայքներն ունին հաւասարապէս, երկուքն մէջ ալ գեղեցիկը գոյութիւն ունին. միայն կեանքի, ցեղի ու միջավայրի պայմաններն են որ զանոնք այնքան զանազանած են իրարմէ:

Բնութիւնը ուրեմն մեր կարծածին չափ անիրաւ չէ ու օժտած է գրեթէ ամեն կին՝ գեղեցկութեան ալիքան ձեւերէն միովը. կիններուն պարաքն է բնութեան այդ թանկագին շնորհը անեղծ պահել ու զարգացնել. ինչպէս հոգեւոր պարտիզպան մը, վայրի վարդերը կը պատուաստէ, արհեստական խնամքներ կուտայ, ասով անոնց բուրմը, գոյնը ու փափկութիւնը ճշխացնելու համար:

Համեստութիւնը ու ներդաշնակութիւնը՝ գեղեցկութեան էական պայմաններն են. չկայ բնութեան մէջ բան մը, նոյն իսկ ամենէն տգեղ կարծուածը որ զուրկ ըլլալէ:

ԹԵՐԹՕՆ “ՓԱՐՈՍ” Ի (35) ԺԸՀԱՆ ՏՊԻՐԻԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ Եզրագծով կեանքի ցնցումները մէկ ԴՆՈՒՆ Թ.

Ձէր յիշեր այսչափ բուռն ուրախութիւն մը երբեք զգացած ըլլալը: Արեւելեցի իր երեւակայութեանը մէջ, որ ընթերցումով եւ քաղաքակրթութեամբ ալ աւելի նրբացած էր, դեռաւոր աղջիկը այս ժամուս կ'երեւէր իրեն իբրեւ վաղնջուց կիններուն կերպարանը ըզգեցած, ու իրեն համար կ'ըլլար աստուածային հուրին՝ որուն մէկ գգուանքը երկնից բոլոր ուրախութիւնները կ'արժէ: Դարձեալ այն միտքերէն կոյս՝ էր անի, որ դժբաղդ միջին դիւրեւորներուն մէջ կ'երեւէր պատերազմիկին, կը գտես:

Լայ ալի երկուքէն՝ Կարճ կամ երկայն հասակը չէ որ կը տգեղցնէ կինը, այլ կարճ ու գէր կամ երկայն ու նիհար ըլլալը: Թուի կամ ճերմակ գէմքը գեղեցկութեան տեսակէտով տարբերութիւն մը չունի. բայց թուի գէմքերու վրայ ճերմակ փոշին ու հագուստներու, գլխարկի, արդուզարդերու անյարմար գոյները երբեմն բոլորովին կ'աւերին ամբողջին ներդաշնակութիւնը: Կինները իրենց գեղեցկութիւնը պահպանելու համար պէտք է ջանան զարգացնել ու նրբացնել իրենց ճաշակը ու մօտէն ուսումնասիրեն առողջապահութիւնը:

Մեր ցեղը ընդհանուր առմամբ թէեւ նրբացած բարձր ու մասնաւոր յատկութիւնները չունի, բայց տգեղ է չենք կըրնար ըսել. խառնուրդ ցեղերու յատուկ զանազանութիւնը չունինք, մեր բոլոր կինները գրեթէ միեւնոյն կազապարին վերայ ձեւուած են ու շատ զգուշ չէ թաւորոնի կամ սրահի մէջ ժողովուած կիններուն մէջէն որոշել հայ կինը: Եւրոպացիները կ'ըսեն թէ արեւելքի մէջ՝ կիններու գեղեցկութիւնը իրենց ծանրութեանը համեմատական է. այսինքն կին մը որչափ գէր ըլլայ, այնչափ գեղեցիկ կը նկատուի. ասիկայ չափազանցութիւն մըն է անշուշտ, թէեւ պէտք է խոստովանիլ թէ մեր կիններուն նստուկ ու դատարկ կեանքը, տըգեղնալու աստիճան գիրութեան կ'առաջնորդէ զիրենք:

Կնոջ մը մարմնոյն բոլոր ձեւերուն իրարու հետ համեմատական ըլլալը բաւական չէ սովոր. կարգ մը մասնաւոր խնամքներ կան որոնք կ'ամբողջացնեն գեղեցկութիւնը, ու որոնց մէջ առաջին տեղը կը գրաւեն գոյնի ու մազերու առողջապահիկ խնամքները:

Այսօրուան յօդուածով պիտի խօսինք մորթի գոյնին առողջապահիկ օրէնքներուն վրայ:

Դէմքի գոյնը ամենէն փափուկ ու շուտ փոխաւորող մասն է գեղեցկութեան: Զօրաւոր լոյսը, արեւին ճառագայթները, մորթի գոյնին վրայ շատ մեծ ներգործութիւն մը ունին, ասոր համար ձեւնոցը, արեւանոցը ու շղարջը շատ օգտակար են գոյնի լուս պահպանման համար: Շատերու ծանօթ է ճառքոյններու արեւանոցը ու գեղին գոյնը, մինչդեռ արեւանոցն ճառքոյններէն, սիրուն անգլուհի մը ճերմակ ու վարդագոյն մորթը ունին, որովհետեւ քիչ անգամ գործ կ'ընեն եւ միշտ թանձր քողով ծածկուած են: Ընդհանրապէս խոսեալ ու տաք կլիմաները շատ կը փոխեն մորթին:

(Մնացեալը յաջորդով)

պընդէ անոր արեւութիւնը՝ ու անոր բազմազան կենսական ոյժը կը կրկնապատկէ, նոյնպէս մարմնաւորումն էր անի առասպելային այն իշխանութիւններուն, խալիֆային այն աղջիկներուն որոնց պատմութիւնը պահեցին Լեթիմի վէպերը եւ զորս կախարդական հմայք մը կալանաւոր կը պահէր մոգական պալատի մէջ, որոնց աղւոր աչքերուն համար Մուսաօմէտի որդիքը իրենք գիրենք խողովող կ'ուտային ու կը մեռնէին առանց ճիկ հանելու. գերագոյն իղձով մը բազուկներին զէպ ի իրենց երազին գեղեցիկը կարկանդակ:

Ու Մուրատ կը ծիծաղէր իր տղայամտութեանը վրայ, շատ պզտիկ տղայ կը համարէր ինքզինքը. բայց անուանին եւ րանութեամբ անձնաթիղ կ'ըլլար իր միտքին ծնած այդ պատկերներուն, որոնց թագուհին էր Ժէրմէն, ամենէն աւելի սրբափայլ, նմանապէս ամենէն աւելի նուրբ, այնչափ այժմէական շնորհքով:

ՀՈՍԿԷ - ՀՈՆԿԷ

ՄՈՂՈՐԱԿՆԵՐՈՒՆ ԱՇԽԱՐՀԷՆ

Անցեալ հինգշաբթի օր, առաւօտեան ժամը 7ին Արամազդ եւ Սաթուրնոս, արեգակնային դուրթեան երկու մեծագոյն մոլորակները, յետին աստիճան մօտաւորութեան մէջ գտնուեցան իրարու հետ: Իրենց հեռաւորութիւնը լուսնին տեսանելի արամադիծէն նուազ էր:

Այն օրէն ի վէր, երկու մոլորակները երթալով կը հեռանան իրարմէ եւ վաթսուն տարին միայն երկուքն ալ մի եւ նոյն ժամանակ պիտի վերադառնան միեւնոյն համատեղութեան մէջ եւ վերստին պիտի ներկայացնեն այն տեսարանը որուն անցեալ հինգշաբթի օր, արեւին մարմնիցէն ետքը, երկու երեք ժամի չափ հանդիսատես եղանք:

Այս հետաքրքրական տեսարանը մեզի ներկայացնող մոլորակները որոնք 1841ի նոյեմբեր ամսին մէջ տեսնուեցան եւ պիտի տեսնուին 1961ի դեկտեմբեր ամսուն, երկրագնդին շատ աւելի խոշոր են. Արամազդի ծաւալը 1280 եւ Սաթուրնայինը 720 անգամ աւելի մեծ են: Իրենց իսկական հեռաւորութիւնը երկրագնդէն քանի որ երկուքն ալ նոյն գծին վրայ կը գտնուին, կը հաշուուի 100,000 երկրաշառկան շառաւիղ: Երկրագնդէն շառաւիղ մը 6371 մղոն ըլլալով՝ Արամազդ որ մօտաւորապէս մոլորակն է 637,100,000 մղոն հեռի է երկրագնդէն:

ՈՃՐԱՅՈՐՈՐ ՄԵՐԸ

Ռուսական թերթերը կը հրատարակեն անուր օճիկի մը մանրամասնութիւնները որուն թատերաւայրը եղաւ Յոյն օրթոտոքս մայրապետներուն վանքը ի Լիւնա, մին արեւմտեան Ռուսիոյ կարեւորագոյն քաղաքներէն:

Ըստ կանոնի ոչ մէկ մարդ կրնար ընտելի վանքին եւ անոր յարակից մասերուն մէջ: Սակայն բացառութիւն մը ըրած էին ծեղունի պարտիզպանի մը համար որ երկու տարինեք ի վեր վանքին ծառայութեան մէջ էր:

Օր մը պարտիզպանին այցելութեան եկաւ իր զաւակներէն մին զոր քսան տարին է ի վեր տեսած չէր: Հայրը, տղան շատ սիրելու կամ խնայողութիւն մը ընել տալու համար անոր, տոնաւարից որ իրեն հետը բնակի: Տղան ընդունեցաւ հօրը առաջարկը եւ համաձայնեցան որպէս զի քոյրերը բան մը չիմանան:

Երիտասարդը, գրեթէ ամէն օր, փեղկի մը կ'անակէն կը դիտէր քսանը եօթը քոյրերուն, գրեթէ բոլորն ալ երիտասարդ եւ գեղեցիկ, մատուռ երթալը:

Մեծ զարմացմամբ ճանչցաւ երիտասարդ քոյր մը որ զարմանած էր զինքը Բիէվի Սուրբ Աննայի հիւանդանոցին մէջ:

եւ իր սրտին խօսող այնքան մարդկօրէն գեղեցկութեամբ:

Ու յետոյ, տարակոյս մը կը կանգնէր մտքին մէջ, ու զինքը կը չարչարէր. «Հապա եթէ զիս չսիրէ՝ հապա եթէ, սխալած ըլլամ: Ո՛հ, իրեն համար չըլլա՛լ ուրիշ բան բայց միայն «Բրէնա»... շատ հարուստ ու շատ բարի տէր մը... որ ստակդ կուտայ եւ որ յարգելի է... ո՛ր պիտի վիշտ... Ի՞նչպէս, առանց սարսափեցնելու զինքը, ըսել իրեն թէ ինքն է ըզմանակ կեանքս. թէ իրեն համար՝ չըկայ զոհողութիւն մը զոր պատրաստ չըլլամ ընելու... Ի՞նչպէս, առանց զինքը վերաւորելու, առաջ իրեն այն դիւրակեցութիւնը զոր չունի, անկախ տղատ ընել զայն եւ երջանիկ... դուրս հանել զայն ծառայութեան այն վիճակէն ուր Սակայն եթէ չհաւատայ խոսքին, կամ ինչ որ վատթարագոյն է, եթէ իրեն ըսեալ:

եւ որուն սրբապիղծ զարպաս մը մատուցած էր: Առիթը իրեն յարմար թուեցաւ եւ գիշեր մը, կանթեղ մը ձեռքը, քոյրերուն բնակած թաղը սպրդեցաւ:

Քանի մը խուցերու մէջ մտաւ առանց գտնալու այն զոր կը փնտէր եւ առանց իր ներկայութեան ամենափոքր կասկածը տալու անոնց մէջ բնակող քոյրերուն: Մին սակայն, միւսներէն նուազ բարեխառ, կը տեսնէ զինքը եւ արհաւիրքի ծիւ մը կ'արձկէ: Չուարականք վրան կը խոյանայ, խեղդամահ կ'ընէ զայն եւ կը շարունակէ իր փնտռութիւնը:

Ուրիշ քոյր մը կը նշմարէ զայն, բայց դժբախտ ընկերուհիէն աւելի պաշարուն գոնուելով՝ տեղէն չի շարժեցաւ: սակայն մարդասպանը խուցէն դուրս ելածին պէս անկողնէն ցատկեց եւ գնաց վրտանգի կոչնակը հնչեցնելու:

Քոյրերը, յանկարծակի արթննալով, սկսան փնտռել ինքնամուտ անձը, եւ ժամանակին վրայ հասան աղատելու համար իրենց ընկերուհին զոր վերջապէս գտած էր:

Դժբախտը, տեսնելով որ կորսուած է, պատուհանը բացաւ եւ դաւիթին մէջ ցատկեց փախչելու համար, բայց դուրսի դուռը գոցուած ըլլալով՝ ճգնազանգակին ձայներէն վրայ հանողներէն ձերբակալուեցաւ:

Խեղդամահ եղած քոյրին դիակը քանի մը ժամ ետքը միայն գտնուեցաւ:

ՏԵՂԱԿԱՆ

Կը հաւաստեն թէ արդարու թեան խորհրդական Պ. Մաք Իւլիքէյթ որոշեւ է այսուհետեւ գլխաւորութեան հրապարակաւ կատարել չի տալ: Կը շնորհաւորենք Պ. Մաք Իլիքէյթ իր այս իմաստուն որոշման համար:

—Չորս հարիւր Անգլիացի զինուոր կապաստուին մօտերսի Գահիրէ, գրաւման բանակէն Հարաւային Ափրիկ մեկնողներուն տեղը լեցնելու համար:

—Յունաստանի դիւանագիտական գործակալաւոր Պ. Կրիբալիս, յոյն օրթոտոքս Պատրիարք Տ. Փօթիոսի և Գահիրէի Հելլենական գաղթականութեան անդամները յառաջիկայ շաբաթ օր պիտի հաւաքուին քաղաքին մէջ օրթոտոքս նոր եկեղեցի մը կառուցանելու խնդրով զբաղելու համար:

Այս շինութեան համար մինչեւ այսօր հաւաքուած նուիրատուութիւն:

Լիքս մտիկ ընել չուզէ՞... Հարաւ է. ըզգաստ, պիտի ուզէ ելլալ երթալ... երթալ, զառնալ իրեններուն քով, խնդրելու անոնցմէ այն ակնածութիւնը եւ պաշտպանութիւնը զոր չկրցայ տալ իրեն իմ տանս մէջ... Եթէ ելլայ երթալ, ի՞նչ պիտի ըսեմ... Ե՛ս... »

Ու խեղճ բրէնսը պարտաւորեցաւ ինքն իրեն խոստովանել թէ բան մ'ալ չէր կըրնար ընել. իր աստիճանը, վիճապետին մօտ իր դիմքը կը բռնադատէին զինքը հանգարտ իր քանդակ մնալու, եւ առանց տրտուելի եւ տխրութեան կրելու այս պիտի կացութեան մը բոլոր գաղտնութիւնները:

Եւրոպացի բրէնս մը, եթէ շատ նեղը մնայ, կրնայ անպատշաճ ամուսնութիւն մը ընել. Արեւելքի բրէնս մը, բնաւ եւ ոչ մէկ պարագայի մէջ, իր կրօնքէն եւ հայրենիքէն դուրս կին մը անտես իրաւունք չունի: Ու Մուրատ ներսիքէն:

Թիւններուն գումարը 18,000 ոսկիի կը բարձրանայ:

—Սուսա եղբայր գործարանին սիկառէթի բանարները գործադուհի հրատարակեցին հինգշաբթի օրը և անոնցմէ հարիւր հոգի գործարանին առջև հաւաքուելով ցոյցեր կատարեցին:

Ոստիկանութեան հրամանատարը իրեն հետ ունենալով բաղմամբիւ բարձրաստիճան սպաներ և ոստիկաններու հետեալ խումբ մը ցոյցերուն վայրը գնաց վերջ գնելու համար խռովութիւններուն:

Գործաթողները ցիրուցան եղան, բայց անոնցմէ հարիւր հոգի նորէն խմբուեցան Գաֆէ Ռուսայալ, Պասուէլ-հատիտ փողոցին անկիւնը, ուր մնացին մինչև ժամը 3:

—Անթուիօ ա'Ամիքօ, 22 տարեկան իտալացի մը որ Պուլաք կը բնակէր, 12 օրէ ի վեր անհետացած է իր բնակարանէն: Առտու մը Ապպասիէի կողմը որսի գացած էր, անկէ ի վեր երևան չեղաւ:

Հիւպատոսարանին և ոստիկանութեան բոլոր փնտռութիւնները մինչև հիմա արդիւնք մը չի տուին: Կը կարծուի թէ ոճիր մը տեղի ունեցած է:

—Դերձակ բանւորները հինգշաբթի օր նոր գումարում մը ունեցան Հապար և մէկ Դիչերներու սրահին մէջ Տոքթ. Բիսթիսի նախագահութեամբ և որոշեցին գործի սկսել այն գործարաններուն մէջ որոնց տէրերը հաւանեցան ընդունիլ իրենց Լա Գոնգորտիտ ընկերութեան առաջարկած պայմանները: Երէկ անգործութեան գատապարտուած գործարաններուն շնորհիւ վերաբացուեցան:

Այս գործարաններուն մէջ աշխատող գործարանները իրենց վաստակին քաւորքը պիտի տան Լա Գոնգորտիտ ընկերութեան որ հաւաքուած գումարները պիտի բաժնեն միւս գործարաններուն գործաթող բանւորներուն մէջ:

—Առողջապահական վարչութեան ընդհանուր անօրէն Տօքթ. Բիչիյին պէյ առջի օրը մեկնեցաւ Վերին Եգիպտոսի մէջ քննութիւն մը կատարելու համար:

—Հանրային պարտուց Մնտուկը ծանոյց ելաւ իր նախարարութեան թէ գոհ է որ Եգիպտական կառավարութիւնը որոշած է մաքսային տուրքերը ջնջել Եգիպտոսի բոլոր քաղաքներուն միջև բաց ի Ալեքսանդրիայէն և Գահիթէէն, ինչպէս նաև տարողաբաժի իրաւունքները:

—Առողջապահական վարչութիւնը իրմէն կախում ունեցող բժիշկներուն և դեղագործներուն շրջաբերական մը ուղղեց խնդրելով որ իրենց տարեկան տեղեկագրերը յանձնեն իրենց տեղւոյն միւստիքիթիւներուն քննիչին:

—Առողջապահական վարչութիւնը հանրային գործոց վարչութեան նախակ մը ուղղած է խնդրելով որ իր տրամադրութեան տակ դնէ առողջապահական վարչութեան գրասենեակներուն ամենէն մօտ գտնուող սենեակները, հոն հաստատելու համար ուղղման և աւելութիւն նոր գրասենեակները:

—Նոր արկած մըն ալ պատահեցաւ Մաթարիէի գծին վրայ:

Չորեքշաբթի օր, կէս օրէն ետք՝ ժամը 3 ին, արապ մը Տէմէրտաշի կայարանին գիծէն անդին կ'անցնէր երբ Մաթարիէէն եկող կառախումբը զգեստնեց զինքը և մարմին վերայէն անցաւ կտոր կտոր ընելով զայն:

Կայարանին պաշտօնեաները որ արկածին վայրը փութացան էին գիտակցութիւնը և հիւանդանոց ուղարկեցին օրինական վաւերացումներու կատարման համար:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԼՈՆՏՈՆ, 5 Դեկտ.— Պատերազմին ըսկիցը նախաժողով մէջ երեւան եկած զբոսարարութիւններուն նման զբոսարարութիւններու չի հանդիպելու համար, որոշուեցաւ գլխաւոր գաղութներուն զինուորական կատարեալ քննութեանը ձեռնարկել:

«Տէլի Նիւզ» կը ծանուցանէ թէ կառավարութիւնը վերստին կը ջանայ անպաշտօն կերպով բանակցիլ Պէրսերուն հետ Հարաւային Աֆրիկէի իրենց պէտքն միջոցաւ:

Եւ, բաւական է որ խտիվը այդ բանին զինքը հարկադրէր, կը յուսար որ այդպիսի ամուսնութիւն մը ալ ամենուրեք չի կըրէր:

Այս պահուն, միտքը ինկաւ որ Ժէրմէնին որեւէ ընծայ մը ընէ, գոհար մը, առարկայ մը զոր կարենար իբր զարդ գործածել իրեն վրայ մտածելով, կը կարծէր որ այս բանը զայն երջանիկ պիտի ընէր, իրեն ի նպաստ զայն Խաթիբ գործով յուզէր:

Ընդհանրապէս կիները անգագայ չեն մնար այս տեսակ հոգածութեանց:

Այս մասին քրէնսը կը սխալէր. հակառակ շատ իրական բարեմասնութեանց, հակառակ գրեթէ եւրոպական դաստիարակութեան մը, չունէր այն դատումը, ահա նրապատմութիւնը զոր անպատճառ կ'ունենայ բարեկիրթ մարմնացի մը:

Պաշտոնը դառնալուն պէս ուրեմն, ներքինացիներ իր սկիւղաճանդին զրկեց՝ հրամայելով որ տեսակ տեսակ գոհարներ, ինչ որ նուազ փայլուն եւ ամենէն աւել:

Տէրպէի մէջ ազգային ազատական դաշնակցութեան ընդհանուր յանձնաժողովին գումարումը ցոյց տուաւ թէ ոչ անհաշտ Պէրսապաշտպանները և ոչ ալ թագաւորականները գերիշխան ազդեցութիւն մը ունին կառավարութեան վրայ:

ՄԷԼՊՈՒՐՆ, 5 Դեկտ.— Դաշնակցական ներկայացուցիչներուն Առեանը 33 ժամ նիստի կեցաւ: Կառավարութիւնը կը ջանայ մաքսային երեւի մը փոփոխութիւններ ընդունել տալ: Ընդգրկող իր կուսակցութիւնը նիստը կը վերցնէ:

ԲՐԷՅՈՒՐՆԱ, 5 Դեկտ.— Երէկ Թրանսվայի մէջ 250 հոգի գերի բռնուեցան:

ԼԱՀԷ, 5 Դեկտ.— Կիւտնօլի մէջ տըրուած նախաձեռն շատ շքեղ եղաւ: Պետական մարդու մը արժանի երկայն ճառախօսութեան մը մէջ, Կալէսի իշխանը յիշատակեց գլխաւոր պատահարները իր ճամբորդութեան որուն համար ըսաւ թէ սաստիկ չափեկան եղաւ եւ անմոռանալի յիշատակներ հայթայթեց: Ընդարձակօրէն խօսեցաւ Մայրաքաղաքին եւ գաղթականութիւններուն միջեւ տիրող յարաբերութիւններուն պատմական հանգամանքներուն մասին, իրենց անհնգութիւնը Թագին հանդէպ եւ իրենց սէրը Կայսրութեան համար: Եռանդագին ալ նարկութիւն մը ըրաւ Մորիս կղզիին բնակիչներուն ըրած ընդունելութեան որոնք դեռ կը պահեն հինաւորեց ֆրանսային յատկանշանական հրապոյրները:

Լորտ Սայգալիի դիտել տուաւ թէ մեր ցեղին հիւսուոր անգամներուն հաւանութիւնն ու պաշտպանութիւնը կը վայելէինք, ինչ որ միզի համար անհունապէս աւելի կարեւոր է քան ուրիշ ազգերու քննադատութիւններն եւ արհամարհանքը: Մեզի համար այդ ազգերը իրաւունք չունին մեր ընթացքը քննադատելու եւ մեր գործելու եղանակը չենք կրնար փոխել իրենց կարծիքները յարգելու համար:

ԲԱՐԻՉ, 5 Դեկտ.— Խորհրդարանին մէջ, Պ. Ռիպօ միջամտեց ելմտացոյցին ընդհանուր բանակաւոր մէջ. երկայն ճառ մը արտասանեց եւ յայտնեց եկամտաւորուն նուազումին իրեն ներշնչած երկուղը. հարուածեց հաւաքական վարդապետութիւնները եւ անոնց գործադրութիւնը:

ՍՕՅԻԱ, 5 Դեկտ.— Սէրպիոյ ծանօթագիր մը այս երկրին պատասխանատուութիւնը կը թօթափէ Միւ Սթոնի ոճրագործութիւնէն: Կը վախճուի որ այս առթիւ պայքար մը տեղի ունենայ Պուլկարիոյ եւ Միացեալ Նահանգներուն միջև:

ՎԱՇԻՆԿԹՈՆ, 6 Դեկտ.— Հայ-Բառնս-Փօթ դաշնագրութիւնը հրատարակուեցաւ: Կը յիշատակէ ջրանցքին շինութիւնը Միացեալ-Նահանգներուն ձեռք կամ հովանաւորութեան տակ եւ այս նպատակով

կատարեալ իշխանութիւն տրուած է իրեն զայն հաստատելու երկուսին համար եւ անոր շահագործութեան տնօրէնութիւնը բաշարձակապէս իրեն կը պատկանի: Երթու եկութիւնը հաւասարապէս ազատ պիտի ըլլայ ամեն երկրի վաճառաշահ կամ պատերազմական նուերու համար, ինչպէս Սուէզի ջրանցքին վրայ: Ամրոցի խօսք եղած չէ:

ԼՈՆՏՈՆ, 6 Դեկտ.— Բոլոր թերթերը կը բացատրեն Կալէսի իշխանին իր վերջին ճառին մէջ պարզած պետական մարդու եւ գիւնադէտի բարձր յատկութիւններուն կարեւորութիւնը, ինչպէս նաև ցոյց տուած դիտողութեան սրութիւնը:

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ-ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶԵՆԿԱՏԱՐ Ի ԳԱՀԻՐԷ

Գահիրէէն և շրջականներէն կ'ընդունուին Պոլիս, Վենետիկ և արտասահմանի ուրիշ կիւրծները գտնուած ամեն տեսակ գիրքերու, ինչպէս նաև Համպուրկի, Պրոնշուրկի վիճակահանութեանց տօմսակներու, Եգիպտական Գրէտի ֆոնտիէի, Բուլմէլի երկաթուղոյ բրօմէսներու, և դարձեալ ամսավճարներով արժէթովեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային:

Արժէթովերու, վիճակահանութեանց վերաբերեալ ապօպրանքները ըլլալու են կանխիկ փոսթի միջոցաւ: Գիրքերու համար կարելի է նախապէս կէսը զրկել և մնացեալը գօնքո ռաւնդուրաւան վճարել այն պահուն, երբ յանձնարարուածները շրկուին իրենց հասցէներուն:

Մինչև 20 շաբաթ արժէթով յանձնարարութիւններու համար Եգիպտ. 5 միլիմնոց գրօյմաթովեր կ'ընդունուին:

Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի և այլն ծախսեր միշտ յանձնարողներուն կը պատկանի:

Հասցէ՝
Garabed Erzenatzian
Rue Abul-Aziz
CAIRE

կը նախանձէր այն ուսանողներուն վիճակին՝ որոնք միայնա կամ մենքիւս երթալով, քոնէ աղատ էին իրենց ծառային համաձայն ընկերութիւն մը ընտրելու, զոր թեւերին առած յաղթանակաւ կ'առնէին կուզային՝ արհամարհելով սովորութիւնները եւ տրտուջները — աստուք գէթ կարող էին երջանիկ ըլլալ եւ իրենց կեանքը իրենց քմահաճոյքին կամ սրտին համեմատ կարողապել:

Իսկ ինքը, իրեն միակ եւ վերջին օճան, ունէր իր գերուհիները կամ հարճերը, որոնց վրայ արեւելեան տիրող բացարձակ իրաւունքը ունէր, եւ կամ թէ իր գերազատանէն բրէնսէսի մը հետ փառապանք խնամութիւն մը, բրէնսէս մը զոր երբեք չէր տեսած եւ որուն արժանիքները եւ գեղեցկութիւնը՝ իրեն համար կը գնահատէր իր մայրը. ինչպէս որ պատահած էր իր առաջին տխրալիշտակ աւուսնութեանը ժամանակ: Սակայն իրեն կարծիքը այս մասին, ա՛, ալ չէր ուզեր,

ի գեղեցիկ գտնէր՝ առնէ բերէ:

Երկու ժամէն ներքինին եկաւ, ամեն ձեռք ու ամեն զոյնէ ակնաստուկներով բռնաւորուած, այն ամեն բրէնսը շողակներով շրջապատուած երկու փառաւոր մարդարիտ ընտրեց, որոնք աղջկան ականջները հիւսարաշ կերպով պիտի պնէին:

—Հինգ հաղար ֆրանք է, փաշա, ըսաւ խոնարհաբար Մորկան աղայի հետ եկող վաճառատան պաշտօնեան:

—Հինգ հաղար ֆրանք... Մուրատ ուղորմած ժպիտ մը ունեցաւ... բա՛ն մըն էր. եթէ Ժէրմէն հաւանէր միայն ականջը դնել զանոնք, եթէ անոր ինքզինքը աւելի աղւոր տեսնելով ժպտիլ տեսնէր... Ժէրմէն նոր դարձած էր, պզտիկ հանրմները, սենեակին քաշուած, զգեստնին կը փոխէին սպասուհի գերուհիին օգնութեամբ: Սթա Ապուհա փոթորիկի մը նման ներս մտաւ եւ իր մտերիմ բարեկամութիւնն պարանոցին փարեղով:

—Ա՛խ, սիրելի՛ օրիորդ, ո՛րչափ ուշա-

ցաք... ո՛րչափ ձանձրացայ առանց ձեզի:

Ժէրմէն, մտադրաղ, ողջագուրեց զայն: —Լաւ ուրեմն, ուրիշ անգամ միկտեղ գալու ես, սիրելիս. այն ամեն չես ձանձրանար:

—Մեկտեղ գա՛մ. տո՛ւ, ի՛նչ դիւրին բան. երկու անգամ է ահաւասիկ որ հրաման չես տար ինծի որ ձեզ հետ դուրս ելլամ. չեմ դիտեր ի՛նչ կ'ուզեն ինձմէ՛ ժամանակէ մը ի վեր. բայց երբէք վրաս այրչափ հակողութիւն եղած չէր. ձեզի հետ ըլլալուս պէս՝ կը կանչեն, նոր հրաման մը կ'ունենան միշտ ինծի տալու. երէկ թող չտուին սր մայրս տեսնեմ... բան մը չեմ հասկնար կոր... դո՛ւք...:

—Ո՛չ ալ ես, պատասխանեց Ժէրմէն. յետոյ, ժպիտով մը հարցուց:

—Բայց այսօր ի՛նչ ես եղեր որ այդպէս սխուր ես:

Սթա Ապուհա կը լռէր. բան մը չէր ուզեր խօսիլ, նուրբ դէմքը անսովոր տուրութեան թանձր ստուերով մը սքողուած, կուրծքը զոպուած հեծկտանքներով լի:

(Շարունակելի) Թարգ. Յ. Սեթեւն

Մ Ո Ւ Չ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Ց

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒ-ԵՈՐՔԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1893 թ

ՊԱՀՆՈՒՄ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀՍՋԱՐ ՖՐԱՆԻ

Ապահովագրական ամեն կարելի դրուսիւններ կը գո ծաղիւն. խաղն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, գաւազան դրամագլուխ, ցման եկամուտ, եւայլն

ՄՈՒՉՈՒԱՆ ԼԱՅՑԻ սակագիրն և ապահովագրութեան զանազան գրութիւնները չափաւորապէս մի ապահովագրութիւն. — Առատաձեւն պայմաններ ճշգրտութեանց համար դիմել ի Գահիրէ առ Պ. Ն. ԲԻՐՉԻՍ և Ժ. ՎԱԼԵՆԵ, Ընդհ. ներկայացուցիչք: Աղէքսանդրիա Անթ. Թ. ԱՅԼԻ, գլխավոր գործակալու Գ. ԵԿԱՌՈՅ ԴԵՐ-Դործակալ ի Գահիրէ

ԴԻՐԵՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՖՐԱՆԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ՅԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱԶԻՐԷ ԲՈՒՍԱՅԻՏ

ԳՐԵՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Ֆրանսայի և օտար երկրներու վրայ կաւտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը գանձէ Եգիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ ձգուած գրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաժամով մուտհաններ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՅՈՅ ԳԻՐ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱԵԿՆՈՒՄ. — Ամեն շորքը շարժի իր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բիրեա, Իզմիր, Միտլիի և Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղէքսանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԵՄՆՈՒՄ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շորքեւանները թի-

րեա հանդիպելուն, Արթըր այցելել:

ՍՈՒՐԻՅՈՅ ԳԻՐ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոն-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէրսին և Իսկէնտէրուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղէքսանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին:

Տասնընչորոր անգամ մը՝ երթեւեկ կարմիր

Թուր հետեւալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻԵՆ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանաց համար դիմել Ընկերութեան Աղէքսանդրիոյ, Բոն-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուլթի ամեն մասնաճիւղերուն:

1-1902

ՏՕՔ. Ս. ԹԱՀՄԻՉՕՅ

Փորձառու բժիշկ արդէն Պալսոյ և փոքր-Սախոյ կողմերը տարիներով իւր արհեստը ի դրած դրած և յետոյ Բարիզի հիւանդանոցներուն մէջ ներքին հիւանդութեան իր մասնագիտութիւնը կատարելագործած ըլլալով, վերջերս ժամանակ մը Սօֆիայի կեդրոնական հիւանդանոցին մէջ ծառայելէ ետքը այս անգամ եկած է հաստատուել ի Գահիրէ:

Առ ժամապէս կը գտնուի ի Ջէյթօն, և իր առնը կ'ընդունի իրեն դիմող հիւանդները, առաւօտեան ժամը 10—12, և կէս օրէն յետոյ 3ին 5 Պ. Տիրիքի դեղաբանը յէշպէքիյէ, Գահիրէ:

Երեքշաբթի և շաբաթ օրերը պարտաւորաբար կը դարձանուին:

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻԻՇԵԱՆ

—X—

ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԺԱՄԱՑՈՅՑԻ ԵՒ ԳՈՂԱՐԵՂԷՆԵՐՈՒ

ԷԳԱՀԻՐԷ, Մուսի փողոց, Եւ Ս. Սիսնատի վանատան զէմը

Ապրանաց զանազանութիւն

Երաշխաւորութիւն

Աժանութիւն

Ճոխ հաւաքածոյ Ամերիկեան և Յրանսական

Փոփոխութիւն

Եւամբ: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու արաւագործութեան տակ կը գտնուի:

ԱՅՑԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՂ ՊԻՏԻ ՄՆԱՔ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի մէջ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍՍԻ

Հետեւալ նոր և առաջնակարգ շրջանակներով

ԱՆԱՐԷՐԷՐ ՆԻՓՈԼԱ, արդթ. թ. 5500	2ԻՍԼԱՅՈՅ տարողութիւն թ. 5500
ԲԷՆ ՕԼԿԱ, " " 5500	2ԱՐ " " 5500

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղէքսանդրիայէն դէպ ի Օտէա, հանդիպելով ԲՈՒ ՍՍՑԻՏ, Զ. ԲԻՄ ՏՐԱՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ ուր կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շրջանակներուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԵՎԼԱՏՈՓՈԼ, ՍԵԻ ԵՌՎՈՒ ԱՍԻԱԿԱՆ ԵՋԵՐԲԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՄ և ԱՋՈՅԻ ԵՌՎ:

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղէքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍՍՑԻՏ, ԵԱՅԱ, ՊԵՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵՎԼԱՆԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԳԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ
Աղէքսանդրիա, Բէքասաւ փողոց:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատուել խորվական Հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագլուխ Անգլ. ոսկի 1,500,000

Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մասնաճիւղեր.

Աղէքսանդրիա, Մանսուրա, Խարթում, Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴՊԻԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱԽԱՌՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փոխում առաջ կը լինէ ինչ որ հիմնապէս բուժելու համար պետք է առնուի վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն սղղու դեղէն մէյմէկ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ ալբուլային դեղերու նման չի խանգարեր ստամբուլ:

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ:

29—316

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐՈՒ, ԳՈՂԱՐԵՂԷՆԱՑ ԵՒ ՖՈՆՏԿՐԱՑՆԵՐՈՒ